Հ Ր Ա Մ Ա Ն N 258-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«11» ՄԱՅԻՍԻ 2017 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 267-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 17-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու, միջգերատեսչական աշխատանքային խմբի աշխատակարգը և որդեգրման հնարավորության մասին եզրակացության ձևը հաստատելու մասին» N 267-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանից հանել «Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ» բառերը,

2) Հրամանում «Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության քաղաքացիական կացության ակտերի գրանցման աշխատանքների և մեթոդոլոգիայի բաժնի պետ, (միջգերատեսչական աշխատանքային խմբի քարտուղար)» բառերը փոխարինել «Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ, (միջգերատեսչական աշխատանքային խմբի քարտուղար)» բառերով,

3) Հրամանում «Ա. ԱՂԱՅԱՆ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի օգնական» բառերը փոխարինել «Ա. ՎԻՐԱԲՅԱՆ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության միջազգային պայմանագրերի և ապոստիլի բաժնի պետ» բառերով:

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ